

Ո Ր Ո Շ Մ Ա Ն Ն Ա Խ Ա Գ Ի Ց


ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.08.2019թ. կայանալիք
Խեղճակաճ Կ/ապրիլ

Ալավերդի համայնքի ավագանու 25.12.2018թ. N 96-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Ձեկ. Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.


Ալավերդի համայնքի ավագանու 25.12.2018թ. «Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքից որպես հանրակացարան տարածքներ անհատույց օգտագործման և սեփականության իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 96-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «վերաբնակեցման համար նվիրաբերել» բառերը փոփոխել նոր՝ «կատարել նվիրատվություն» բառերով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-
ԻՐԱՎԱԲԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Կ. ԿՈՆԻՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Կ. ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » դեկտեմբերի 2018 թվական, N 96-Ա











ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԿԱՅԱՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆ ՇԵՆՔԻՑ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով քաղաքացիների դիմումները և համայնքի ավագանու անդամների առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքի 1-ին հարկից սեփականության իրավունքով Նատայա Իվանովնա Փարսոյանին (հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին կայարան 8) վերաբնակեցման համար նվիրաբերել 136.5 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:
2. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքի 1-ին հարկից անհատույց օգտագործման իրավունքով, քսան տարի ժամկետով, Սերինե Սերգոյի Հովասափյանին (հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին կայարան 34/4) տրամադրել 75.7 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:
3. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքի 2-րդ հարկից անհատույց օգտագործման իրավունքով, քսան տարի ժամկետով, Արտավազ Գևորգի Հովակիմյանին որպես հանրակացարան (հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին կայարան 3/6) տրամադրել 69.1 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:
4. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքի 2-րդ հարկից անհատույց օգտագործման իրավունքով, քսան տարի ժամկետով, Գագիկ Սիրակի Սարգսյանին որպես հանրակացարան (հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին կայարան 16/2) տրամադրել 68.5 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:
5. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի 2/2 հասցեում գտնվող հանգստյան տան շենքի 2-րդ հարկից անհատույց օգտագործման իրավունքով, քսան տարի ժամկետով, Տիգրան Ֆելիքսի Գևորգյանին որպես հանրակացարան (հասցեն՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 1/11-49) տրամադրել 57.5 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:

6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար Կարեն Կոնինյանին՝ կազմակերպել անհատույց օգտագործման և սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

Համայնքի ավագանու անդամներ՝

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արտուշ	Աբելյան			
2.	Արթուր	Դավթյան			
3.	Արմեն	Կարապետյան			
4.	Սեյրան	Հովհաննիսյան			
5.	Արայիկ	Ձավարյան			
6.	Հարություն	Ձավարյան			
7.	Ալիկ	Նասիբյան			
8.	Դավիթ	Նոնինյան			
9.	Սվետլանա	Պետրոսյան			
10.	Վիգեն	Քառյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ